

հասցնել: Մեծ կամքով եւ գիտութեամբ նա ստեղծել է նոր մի աշխարհ: Պատմութեան մէջ չտեսնուած կորովով, նա յայտնաբերել է գործնական հսկայ ճիւղ եւ խելք, իր կամքին է ենթարկել գրեթէ բովանդակ երկրագունդը եւ ազգերին պարտադրել է մեքենական այնպիսի օրէնքներ, որոնց անզգայութիւնը կարելի չէ համեմատել եւ ոչ մի վայրենիութեան հետ:

Երբեք, անցեալում, մարդկութիւնը չի ճգմուած կազմակերպական ոգու ալքքան ահաւոր արջանների տակ: Մեծ շուկաները կանոնաւորում են սրտերը եւ դասաւորում խիղճը եւ գիտակցութիւնը: Տնտեսական ջրանցքները, պղտոր ջուրերի հետ, քշում տանում են շարչարանքը եւ թշուառութիւնը եւ նաւամատոյցների մէջ կուտակում են ահագին ապրանքներ, որ քրտինքը եւ արիւնը արդիւնաբերած են: Յառաջադիմող գիտութիւնը վերլուծում է աշխարհի ստամոքսը եւ հսկայ մեքենաների ահաւոր մարտոգութիւնը: Պետութիւնը եւ կրօնքը, գիտութիւնը եւ արուեստը քարչ են դալիս ստամոքսային ընկերութեան հետեւից եւ նսեմանում հեռաձայնները ցնցող հրամանների ձայնի առջեւ: Հեռաւոր դաղութները պայթում են ուռմբերի տակ եւ գետերը փոխում են իրենց հոսանքը: Անտառները վայր են գլորւում, լեռները իջնում են եւ լճերը չորանում:

Եւրոպական մտքի անցեալը, միջնադարեան եւ վերածնութեան շրջանի մշակոյթը այլեւս կատարելապէս այլափոխուած եւ վերածուած քաղաքակրթութեան՝ տիրում է աշխարհի վրայ: Տարուած իր գործունէութեան խելադար թափով, հարբած իր յաջողութիւններով, դրամատիրական համաշխարհային ուժը կուրօրէն սահում է դէպի իր անդունդը, անգիտակցօրէն առաջանում դէպի մահ ու չի ուզում տեսնել այն նոր հոգեկան աշխարհը, որ ծագում է արեւի հետ Հեռաւոր Արեւելքում:

Արեւելքում՝ եթէ ուստական կոմունիզմը արդէլք չհանդիսանայ: Որովհետեւ այն՝ ինչ որ անուանում են այսօր համայնավարութիւն, մարքսիզմ եւ լենինիզմ, ուրիշ բան չէ, եթէ ոչ բուրժուական մտայնութեան վատթարագոյն արտայայտութիւնը:

Այստեղ մարդը իր դէմքը խոնարհում է

նիւթական աշխարհի առջեւ, իբրեւ միակ իրականութեան առջեւ, որը մատչելի է նրա սահմանափակ գիտակցութեան ու նրա կենդանական բնազդին ու այլեւս չի ճառագայթում: Կեանքի տեքնիկական կազմակերպութեան տենչը, ընկերութեան բջիջային ըմբռնումը, անհատի ենթարկումը արտադրողական ուժին, օտոմատիզմը, հաշուապահական ճակատագիրի պաշտամունքը, զգացումների եւ զգացողութեան թուաբանութիւնը, մի խօսքով, այն ամէնը, ինչ որ արդի գործարանային կեանքի իրէյալն է կազմում, կազմում է նաեւ համայնավարութեան իտէյալը:

Լենինը սեղմում է Ծօրտի ձեռքը:

Հոգեկան կեանքի դլիսին մահակ են իջեցնում: Մարդկային կեանքը ամբողջովին ենթարկուած է նիւթականին: Կեանքի կենտրոնը լքում է մարդը եւ անցնում իրերին: Տարերայինը ճշգրիտ բնոյթ է ստանում եւ աշխատանքը իր շարժումների գերին է դարձնում: Բոլոր արժէքները քանակի օրէնքներին են հետեւում, ու հոգեկանը դառնում է շահ արտադրելու գործիք:

Չարդացրէք արդի դրամատիրական ընկերութեան սկզբունքները մինչեւ անհեթեթութիւն եւ կ'ունենաք համայնավարութիւն. նոյն թափը, նոյն մտայնութիւնը, նոյն բաղձանքները:

Պատմական նիւթապաշտութիւնը հետեւում է պատմութեան այնքան ինչքան նա կարողանում է աջակցել ընթացող դէպքերի ուրտապտոյտին, բոլորել եւ նոր ձեւով վերահաստատել գերիութիւնը: Անհատը ապրանքի արժէք ունի միայն եւ դնահատում է ըստ իր աշխատանքի կարողութեան:

«Երբեք, — ասում է Տագորը, — երբեք մարդկային մարմինը եւ հոգին այնքան ստոր արժէք չեն ունեցել, որքան այսօր Արեւմուտքում»:

Համայնավարութիւնը ուրիշ նպատակ չունի, քան կազմակերպել այդ դժոխային շուկան:

Քերեցէք ուստական յեղափոխութիւնը եւ դուք կը գտնէք անյադ երազը՝ ունենալ վազող ջուր խոհանոցում եւ ելեքտրակայան գիւղում: